

**ՈՐՈՏՈՒՄ.** — Առաջները թուխպը ընդունում էր իբր Աստուած։ Մի կոյր մարդ բարկանալով Աստծու վրայ, որ իրեն զրկել է տեսողութիւնից, վերցնում է թթու լոշ և շպրտում թխալի վրայ։ Թուխպը սաստիկ բարկանում է, և գոռգոռում կոյրի վրայ։ Այդ գոռգոռոցից առաջանում է որոտումն։

Նաև ասում են.

Երկնքում չար պառաւներին տոպրակների մէջ ձգելով՝ գլորում են, դրանց գոռգոռոցից յառաջանում է որոտումը։

Եղիա մարդարէն երկնքի վրայ քառաձի կառքով անցնելիս անիւների դառնալուց որոտումն է յառաջանում, իսկ մըտրակի զարկից՝ կայծակ։

Երբ առաջին անգամ որոտում է՝ ասում են.

Քըրէ կարկուտ

Անկաճկիռիք<sup>\*</sup>)

Եթէ առաջին անգամ որոտումը Մարտ ամսի կիսին պատահի, այդ տարի հուձը շատ լաւ կը լինի։

Կարկուտ գալիս վառում են Աւագ Ուրբաթ օրը մի քիչ վառուած և պահուած մոմը, զանգակները խփում, կասկարանքը ձգում դուրս՝ ոտները դէպի վեր։ շամփուրը ցցում գետնին, մի կարկուտ չորս կտոր արում, որպէսզի կարկուտը դադարի գալ, իսկ արտերը կարկտից ազատ պահելու համար՝ Զատկից մինչև Եղիա մարդարէի տօնը բոլոր երկուշաբթի օրերը կերակի, են պահում, մասնաւոր մատաղներ անում, իսկ Եղիա մարդարէի տօնին՝ հասարակաց մատաղ անում, ցանքսերը օրհնում։

Կայծակը խփելիս պառաւները գլխներին քար, իսկ ատամների տակ ասեղ են դնում և հացառը ձգում դուրս, որպէսզի կայծակը իրենց տանը չխփէ։

## ՈԳԻՆԵՐԻ ՊԱՇԱՄՈՒՆՔ

Ոգիներ բարի եւ չար

**Պահապան նրեւսակ.** — Ամեն մի մանուկ մի պահապան հրեշտակ ունի, որ շարունակ սաւառնում է նրա շուրջը և

<sup>\*</sup>) Ականջի մօտի ատամներ-սեղանատամներ։

պահպանում նրան: Երբ մանուկը քնում է՝ հրեշտակը թևերը պարզած հսկում է նրա վրայ, սնարի մօտ կանգնած: Եւ երբ նա զարթնում է՝ սա ձեռին ծաղկի փունջ խաղում է նրա հետ. աղու անում, որ ժամու, կտրում նրա երկարացած եղունգները և գանգուրներ ոլորում նրա մազերից: Այս հրեշտակը մնում է երեխայի մօտ մինչև այն օրը, երբ նա արտասանում է առաջին հայկոյական խոսքը:

**Սատանաներ.**—Գանձակի դաւառի ժողովուրդն էլ սաստիկ հաւատում է սատանաների գոյութեան և հազարաւոր պատմութիւններ ու սնոտիապաշտութիւններ ունի սրանց մասին, որոնք մեծ մասամբ նման են միւս հայաբնակ դաւառներում պատմուածներին: Սրանք էլ նրանց երեւակայում են որպէս երկար, պոչաւոր, սև արարածներ, երկար մազերով և երկար եղունգներով, ոտների թաթերը յետև դարձած, չուխահազար բնակում են քարայրներում, ջրաղացներում, աւերակ տներում և մանաւանդ Փաջքայ-ձորում, որ գտնում է Գետաշէնից Ղարաբուլախ տանող ճանապարհի վրայ: Սա մի խոր ձոր է, ծածկուած ժայռերով և խիտ ծառերով: Սրանք լինում են նաև Բանանց գիւղի մւտ գոռունող ծակերի ձորում:

**Սատանաները** իրենց ձայնը նմանեցնելով ծանօթ անձնաւութիւնների ձայնին՝ հեշտութեամբ խափում են մարդկանց մթութեան մէջ:

Էդ սատանաները մասնաւորապէս տագէեր են կոչւում. սրանք սիրում են աներեսոյթաբար, վերցնել հարսերի տօնական հանդիքները հագնել, պար ըսնել պարել և ապա կրիխն աներեւոյթաբար տանել իրենց տեղը զնել: Հարսերը այս զիտենալով նշխարք են դնում կամ ասեղներ շուլուզում հանդերի ձների վրայ, որ նրանք չհամարձակեն մօտենալ:

**Սատանաներն** աւելի կանանց են մատենում, քան թէ տղամարդկանց: Երբ նրանք իրենց հայկոյանքի տոպրտկը ձգում են մարդկանց զլխներին, սրանք սկսում են աջու ձախ հայկոյանքներ թափել, երբ նրանք իրենց մուշտակն են ձգում սրանց վրայ, սկսում են կռուել, երբ նրանք մտնում են սրանց աչքերը և այնտեղ պար ըսնում, սրանք կատաղում են և կա-

մենում են ամէն ինչ կոտրել, փշրել։ Եւ երբ բուն են դնում սրանց սրտերում, սրտնք ընդ միշտ դառնում են նախանձոտ, չարասիրտ և խռովարար։

Սրանց մասին պատմում են Հետևեալները.

Գետաշէնում մի նշանած աղջկայ մի գիշեր քաջքերը կանչում տանում են և իրենց հետ ման ածում։ Սա տեսնում է, որ դրանք իւր բարեկամների շորերը հազած պար են դալիս. գնում իւղոտում է ձեռքերը և իւր եղբօր կնոջ (աղբրակնոջ) հանդերձով սրբում։ Հետևեալ օրը պատմում է այս դէպքը իւր տնեցիներին և երբ չեն հաւատում, ցոյց է տալիս աղբրակնոջ շորերի վրայ մնացած իւղոտ մատների հետքերը։ Այդ ժամանակ բոլորը հաւատում են և «քաջքատարած» են կոչում նրան։ Նրա նշանածը հրաժարում է ամուսնանալ նրա հետ և մի քանի տարի ուրիշ ուղղողներ չեն լինում։ Վերջապէս մի աւելի սրտոտ երիտասարդ ամուսնանում է հետը։ Սա պատմում էր, թէ երբ երեկոները դուրս էր գալիս, սատանաները յետևից գոչում, կանչում են... Ասում են, թէ այդ կինը շատճարպիկ էր, սաստանի պէս մի ժամում մի գուլպայ էր գործում։

Թաքուն-այանի պապը ամէն օր անցնում էր ձիով Քաջքաց ձորով և գնում գալիս Ղարաբուլախ։ Նա ամէն առաւօտնկատում էր, որ իւր ձին արիւն քրտինք է մտած լինում ախոռի մէջ։ Հարցնում է սրան, նրան, և ՚ի վերջու մի պառաւի խորհրդով կուպը է քսում ձիու մէջքին։ Հետևեալ առաւօտ գալիս տեսնում է, որ մի սատանայ նստած է ձիու վրայ և կպել կուպրից։ Խսկոյն վերցնում է մի ասեղ և փոխանակ ծայրից, միւս կողմից շուլուլում է նրա կրծքին։ Սա սատանայ է լինում և ծառայում է սրանց տանը եօթ տարի շարունակ։ Ճատ արի, կտրիճ է եղել, միայն ինչ որ ասել են, նրա հակառակն է արել։ այս պատճառով էլ Թաքուն-այալենք սովորել են միշտ իրենց ցանկացածի հակառակն ասել, որպէսզի իրենց ցանկութիւնը կատարէ։ Եօթ տարին լրանալիս այս սատանան ցեխոտում է իւր ձեռքերը և մօտենալով մի երեխայի խնդրում է հանել իւր կրծքից ասեղը, պատճառաբանելով թէ իւր ձեռքերը ցեխոտ են, չի կարող ինքը հանել։ Երեխան ան-

դիտակցօրէն կատարում է սատանի խնդիրը, և սա անիծելով Թաքուն-այսննոց ամբողջ տոհմը՝ անլայտանում է:

Հացթուխները իրենց կրծքերին ասեղ կամ պողպատի կը- տոր են շուրուլում, որպէսզի զիշերները ուշ տուն վերադառնա- լիս սատանաները չխփեն իրենց:

Օրօցագող. Երբ մայրը երեխալին ծիծ տալիս քնով է անցնում և իւր ծծով ծածկելով նրա քիթն ու բերանը նրան խեղում է, ժողովուրդը նրա մահը ոչ թէ նրա մօրը, ալ մի- տեսակ քաջքերի է վերագրում, որոնց կոչում է «օրօրոցագէ՞ող»: Սրանք իրբ գողանում են մանուկներին և սպանում: Այսպիսի քաջքերից երեխաներին ազատ պահելու լուսով օրօրոցի մէջ նշիարք, համայիլ, խողի մազ են դնում, բարձին ասեղ շու- լուլում: Եւ երբ նկատում են, որ օրօրոցագողը զալիս է երե- խալին տանելու և սա խռառոցը դրել է՝ խկոյն նրա շորերը: պատառելով հանում են և տան հերթիկից դուրս ձգում. յե- տոյ մի քոռամեխ, մի ձու և մի քիչ խողի մազ թաղում օրօ- րոցի մօտ: Այս ժամանակ արդէն երեխան յետ. (ուշքի) է գա- լիս: Հետևեալ օրը երեկոյեան մի կտոր հացի վրայ աղ են ցա- նում, ունելիքով մի կտոր կրակ վերցնում, հացը երեք անգամ երեխալի գլխովը շուր տալիս ասելով. «Բեխիս չոռք, ցաւը տար:» Յետոյ նախ կրակը և ապա հացը շփումում են դուս, ասելով. «Բու փայը չս է, առ քընա»:

Օրօրոցագողերը ժամկոչներից սաստիկ վախենում են, ուստի- և հողատար մայրերը քառասունքի օրերում կանչում են ժամ- կոչին օրօրոցի վրայ աղօթքներ կարդալու, որպէսզի նրանք չհա- մարձակուին մօտենալու:

Հրէ. — Սրանք վիթխարի, մարդակերպ էակներ են, մի- քանիսը միականի, սաստիկ ուժեղ, բայց և սաստիկ միամիտ- բնակւում են առաւելապէս անտառներում, ալրերի մէջ: Սրանք սիրում են կենակցիլ մարդ կանանց հետ, ուստի և ամէն մի- ջոց գործ են դնում նրանց ձեռք բերելու: Մի աւանդութիւն ասում է, թէ այսպիսի մի հրէշ կամեցել է Գետաշէն զիւղից մի աղջկայ կնութեան տանել, բայց երբ աղջկայ ծնողներն ու զիւղացիները թոյլ չեն տուել, նա բարկանալով գնացել մի ա-

Հաղին ժայռ է բերել, որ զիւղի թմբից զլորի և ամբողջ Գետաշէնն աւկրի: Բայց բարեբաղդաբար Պանտը տեսել է նրան և խղճալով գետաշէնցիներին, իւր նիզակով խփել է նրան և քեսուել նոյն այն ժայռին, որ շալակած տանում էր: Հենց այժմ էլ այդ ահազին ժայռը կանդնած է զիւղի գլխին և նրա լանջին նկատելի է հրէշի ամբողջ գծագրութիւնը:

Սրանց մի ուրիշ տեսակը, որ ուշէն է կոչւում, եօթը գըլխանի է, ամէն մի գլխի վրայ ունի քառասուն բերան և ամէն մի բերանում քառասուն ատամ: Նա ապրում է դժոխքի խորքերում: Սատանաները օր ու գլշեր սպասաւորում են նրան, նրա համար զոհեր տանում մեր այս մեղսալի աշխարհից: Նա մարդկանց ողջ ողջ կուլ է տալիս, բայց երբէք չի կշտանում: Նրա փորում կրակ է վառւում, որի բոցերը դուրս են թափւում բերաններից և քթածակերից:

Խորթլադ. —Երբեմն մահմետական ննջեցեալները գիշերները շների են փոխարկւում և շրջում գերեղմանատանը, այցելում իրենց բարեկամների տները, ուր՝ ճանաչելով նրանց, ընդունում են և կերակրում: Հայ գիւղացինքի ասելով մահմեդական տներում գիշերները օջախի մօտ կերակրներ են դնում յատկապէս իրենց ազգական ննջեցեալների համար, որոնք շան կերպարանքով դալիս են ուտում այդ կերակրները և կրկին լուսաբացին մօտ վերադառնում գերեզմանատուն և դիակ դառնում: Բայց երբ այդ շան կերպարանք ստացած ննջեցեալները հայերի տուն են գալիս և արգելւում, առաւօտեան, արև ծագելուն պէս՝ կրկին դիակի են փոխարկւում, և այդպէս մնում մինչև գիշեր, երբ կրկին շուն են դառնում: Եթէ կամենում են, որ դրանք դադարեն կերպարանափոխսւելուց, դիակ դս ըձած միջոցին կտրում են նրանց գլուխները և դնում ոտների տակ ու այդպէս տանում թաղում և կամ մոլլան խաչակնքում է գերեզմանը:

Սրանց մասին կան բազմաթիւ պատմութիւններ, որոնցից գլշենք մի երկուսը:

Մի հայ գիւղացի գիշերելով մի մահմեդականի տնում՝ տեսնում է որ տանտիկինը մի մեծ ամանով կերակրուր դնում

է, օջախի մօտ երբ բոլորն արդէն պատրաստում են քնելու։ Հայը տարօրինակ գտնելով այդ՝ հարցնում է տանտիկնոջը, թէ ում համար է այդ կերակուրը։ Նա պատասխանում է, թէ իւր սկեսրալը համար է, և սրանով աւելի զարմացնում հային, որովհետև սա գլուխէր, որ նրա սկեսրալը վախճանուած է։ Սաստիկ հետաքրքրուած՝ այս հայը իւր անկողինը մօտ է քաշում օջախին և երբ բոլորը քնում են, նա արթուն սպասում է, որ տեսնի թէ ով պիտի ուտի կերակուրը։ Կէս գիշերին լսում է մի շան զրթմնթոց. բացում է դուռը և մի մեծ, ծեր շուն ներս է մտնում, ուղղակի գնում դէպի կերակուրը և սկսում լափել։ Հայը կամենում է դուրս անել շանը, բայց վախճնում է։ Շունը ուտում է բոլոր կերակուրը, ամանը մի կողմ դնում և ծանր քայլերով հեռանում։ Առաւօտեան այս մարդը հարցնում է տանտիկնոջը, թէ ուր մնաց նրա սկեսրալը, քանի որ մի մեծ շուն կերաւ կերակուրը։ — «Մի այդպէս խօսիր, պատասխանում է տանտիկինը, թէ չէ տեղբերս կիմանան քեզ կսպանեն, երեկոյեան եկողը շուն չէր, այլ շան կերպարանքով իմ սկեսրալը»։

Մի ուրիշ հաւ գիւղացի էլ մահմեղականների գերեզմանատան մօտով անցնելիս մի փոքրիկ շուն է տեսել և հետը քերել տուն, գոմսւմ մի քթոցի տակ դրել, որ չփախչի։ Սակայն երբ առաւօտեան վերցրել է քթոցը շունը հանելու, տեսել է մի փոքրիկ, մահմեղական երեխայի դիակ։ Հասկանալով որ դա խորթլազ է, սպասել է մինչև երեկոյ և երբ նա կրկին շան է կերպարանափոխուել, վերցրել է և տարել մահմեղականների գերեզմանատանը ձգել և ինքը փախել։

Եթէ իրիկնադէ մից եկած հիւրը ստիպուած է գերեզմանատան մօտով վերադառնալ, այդ երեկոյ այդ տանը ճրագ չեն վառիլ, որպէսզի խորթլաղները չվախցնեն այդ հիւրին, գերեզմանների մօտով անցնելիս։

### Ց Ա Ւ Ե Ր

Ցաւերը երեխանների նմանութեան ողիներ են, որ աներենիթարար շրջում են և ում աև ճիպոտով խփում են, նա հի-

ւանդանում մեռնում է, իսկ սև կանաչ ճիպոտով են խփում, հիւանդանում, բայց էլի առողջանում է: Սրանք բոլորը մանածողներ ունեն, այսինքն ստիպում են մի կնոջ, մի տղամարդի, որ իրենց առաջնորդէ և ման ածէ այն բոլորի տները, որոնց մասին յանձնարարութիւն են ստացել նրանք Աստծուց: Միայն ջերմը ման ածող չունի, ինքն իրեն է ման գալիս: Նա բնակում է մենաւոր կաղնու մէջ: Ջերմ ունեցողը իւր վրայից պատում է կանաչ կարմիր կտորներ, տանում արդախոի ծառերից կապում, յուսալով, որ ջերմը անցնելով կտորին կանցնի կաղնու մէջ և այնտեղ կը բնակուի ու իրեն ազատ կը թողնի:

Ծաղկամայրը, որ ծտղիկ հիւանդութիւնն է տալիս, շատ քնքոյշ էակ է, նա արիւն չի սիրում, ուստի և նրան գոհեր չեն մատուցանում:

Կարմիր քամին (րօյա) մկնատամը իրենց օջախներն ունեն, որոնց հողը ջրով շաղախելով քսում են հիւանդութեան ենթարկուած տեղի վրայ, իսկոյն լաւանում է:

### Ս Բ Բ Ե Բ

**Նանատակ.**—Բանանց, Խաչակապ, Փիք, Կիրանց և Քարհատ գիւղերին մօտիկ, Ղուշդուրա գետի աջ ափից քիչ քարձը գտնում է «Նահատակ» ուխտատեղին: Այստեղ մի ժայռ քար կայ ցցուած, որի մօտ մի հացի ծառ տարածել է իւր սաղարթախիտ ճիւղերը, բազմաթիւ շորի կտորներով կապկապուած: Մի քիչ հեռու մի աղբիւր է կարկաչում:

Ամեն տարի, առամելապէս մեծ պասի աւագ չորեքշաբթի օրը, որ ժողովրդի բարբառով Զիք չորեքշաբթի է կոչւում, շրջակայ դիւղերից բազմաթիւ մարդիկ, մանաւանդ երիտասարդներ և չափահաս աղջիկներ գալիս են ալստեղ ուխտ: Գարնան սկիզբներին հարսներն ու աղջիկները «հարսի մանուշակ» (ամենամուգ մանուշակ) են քաղում, զարդարում իրենց կրծքերը և ապա բերում շաղ տալիս Նահատակի գերեզմանի վրայ

Աւանդութիւնն ասում է, թէ այդ նահատակը Վարդան անունով մի կտրին երիտասարդ է եղել, որ լեռներում առանձ-